# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 18.10.2024թ. նիստի*

*ք.Երևան* *18.10.2024թ.*

*Նախագահությամբ Լ.Պետրոսյանի*

*Քարտուղարությամբ Գ.Հովսեփյանի*

*Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝*

1. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան*
2. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավացյան*
3. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան*
4. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան*
5. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան*

*Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհուրդը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:*

***Օրակարգում՝***

*1.Սնանկության գործերով կառավարիչների վերապատրաստման դասընթացների ծրագրի քննարկում :*

*2.Սնանկության գործերով կառավարիչ Վազգեն Մարտիրոսյանի անդամակցությունը ՛ՍԳԿԿ՛ ԻԿ-ում դադարեցնելու հարցի քննարկում /հիմք ՀՀ ԱՆ-ի կառավարչի որոկավորումը դադարեցնելու մասին 18.06.2024թ. թիվ 57-Ա որոշումը/ :*

*3.Սնանկության գործերով կառավարիչ Բագրատ Վահրադյանի անդամակցությունը ՛ՍԳԿԿ՛ ԻԿ-ում դադարեցնելու հարցի քննարկում /հիմք ՀՀ ԱՆ-ի կառավարչի որոկավորումը դադարեցնելու մասին 29.07.2024թ. թիվ 71-Ա որոշումը/ :*

*4.Սնանկության գործերով կառավարիչ Սուրեն Վարդանյանի անդամակցությունը ՛ՍԳԿԿ՛ ԻԿ-ում դադարեցնելու հարցի քննարկում /հիմք ՀՀ ԱՆ-ի կառավարչի որոկավորումը դադարեցնելու մասին 29.07.2024թ. թիվ 72-Ա որոշումը/ :*

*5.Սնանկության գործերով կառավարիչ Աշոտ Բաղդասարյանի անդամակցությունը ՛ՍԳԿԿ՛ ԻԿ-ում դադարեցնելու հարցի քննարկում /հիմք ՀՀ ԱՆ-ի կառավարչի որոկավորումը դադարեցնելու մասին 13.09.2024թ. թիվ 93-Ա որոշումը/ :*

*6.Ընթացիկ հարցեր :*

*Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով, համաձայն <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 10-րդ հոդվածի 18-րդ կետի նիստը վարում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:*

*Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ. Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:*

*1. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լևոն Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը, այն է՝ սնանկության գործով կառավարիչների մասնագիտական*

կարողությունների զարգացում՝ սնանկության ոլորտի օրենսդրության արդի հիմնախնդիրների համատեքստում դասընթացների հեռավար անցկացման համար կազմված ծրագիրը /ծրագիրը կցվում է/ և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ իրեն դիրքորոշումն հայտնեց Տիգրան Սահակյանը և առաջարկեց, որ վերապատրաստման դասընթացների ծրագրում ներառել կառուցապատման և գնման իրավունքի հետ կապված իրավահարաբերությունների հետ առնչվող թեմա:

Հարցի վերաբերյալ նաև իրեն դիրքորոշքումն հայտնեց Հովհաննես Եղյանը և առաջարկեց, որ վերապատրաստման դասընթացների ծրագրում ներառել <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ կետի մանրամասն քննարկում :

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել սնանկության գործով կառավարիչների մասնագիտական կարողությունների զարգացում՝ սնանկության ոլորտի օրենսդրության արդի հիմնախնդիրների համատեքստում հեռավար դասընթացների անցկացման համար կազմված ծրագիրը:

Որոշումը դրվեց քվեարկության.

Կողմ-5

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումը ընդունվեց միաձայն :

Հանձնարարել <<ՍԳԿԿ>> ԻԿ գործադիր տնօրենին կազմակերպել և կատարել բոլոր անհրաժեշտ աշխատանքները՝ դասընթացները օրենքով սահմանված կարգով անցկացնելու համար:

2. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 2-րդ, 3-դ, 4-րդ և 5-րդ հարցերը, այն է ՝ ՀՀ ԱՆ 18.06.2024թ. թիվ 57-Ա որոշմամբ դադարեցվել է Վազգեն Մարտիրոսյանի որակավորումը, 29.07.2024թ. թիվ 71-Ա որոշմամբ դադարեցվել է Բագրատ Վահրադյանի որակավորումը, 29.07.2024թ. թիվ 72-Ա որոշմամբ դադարեցվել է Սուրեն Վարդանյանի որակավորումը, 13.09.2024թ. թիվ 93-Ա որոշմամբ դադարեցվել է Աշոտ Բաղդասարյանի որակավորումը : Հարցերը դրվեցին քննարկման:

Օրակարգի 2-րդ, 3-դ, 4-րդ և 5-րդ հարցերի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը և Խաչիկ Նազարյանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

<<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 4.10 կետի համաձայն 2024թ. հունիսի 18-ից դադարեցնել Վազգեն Մարտիրոսյանի, 2024թ. հուլիսի 29-ից Սուրեն Վարդանյանի և

Բագրատ Վահրադյանի, 2024թ. սեպտեմբերի 13-ից Աշոտ Բաղդասարյանի անդամակցությունը <<ՍԳԿԿ>> Ինքնակարգավորվող Կազմակերպությունում:

Նախագահ՝ Լ. Պետրոսյան

Քարտուղար՝ Գ.Հովսեփյան